

Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆՔ-ԲԵՄԱԿԱՆՔ

Գշ. 18 Մարտ.- Երեկոյեան կատարուեցաւ Մեծ Պահոց երկրորդ հսկումը, ի Ս. Հրեշտակապետաց: Հանդիսապետն էր Տ. Շնորհի Ծ. Վրդ. Գասպարեան, որ նաեւ ֆարոգեց:

Եշ. 20 Մարտ.- Երեկոյեան կատարուեցաւ Մեծ Պահոց հսկումը ի Ս. Յակոբ: Հանդիսապետն էր Տ. Դաւիթ Արք. Սահակեան որ նաեւ ֆարոգեց:

Շր. 22 Մարտ.- Սուրբ Կիւրդի Երուսաղիմացւոյն: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի աւանդատան Ս. Կիրդի Սեղանին վրայ: Ժամարարն էր Տ. Աւետիս Արդ. Իփրանեան:

Կիր. 23 Մարտ.- Քառասնորդաց: Անա-
ռակին: Ըստ սովորութեան առաւօտեան ժամերգութիւնը պաշտուեցաւ, եւ Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Հրեշտակապետաց: Ժամարարն էր Տ. Սահակ Արդ. Մաշայեան: Պատարագիչ Հայր Սուրբը «Հայր Մեր»էն առաջ ֆարոգեց:

Գշ. 25 Մարտ.- Երեկոյեան կատարուեցաւ Մեծ Պահոց հսկումը ի Ս. Հրեշտակապետաց եկեղեցին: Քարոզեց Տ. Թեոդորոս Արդ. Զաֆարեան:

Եշ. 27 Մարտ.- Երեկոյեան կատարուեցաւ Մեծ Պահոց հսկումը ի Ս. Յակոբ: Հանդիսապետն էր Տ. Կիրեղ Եպս. Գաբիկեան, որ նաեւ ֆարոգեց:

Շր. 29 Մարտ.- Սրբոցն՝ Յովհաննու Երուսաղիմայ Հայրապետին եւ Հայրապետաց եւ Վարդապետացն Մերոց:

Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Թեոդորոս Արդ. Զաֆարեան:

- Կէսօրէ ետք, Տ. Սեւան Եպս. Դարիպեանի գլխաւորութեամբ Միաբանութիւնը ինքնաշարժերով քարձրացաւ Զիթենեաց լեռ, ուր Համբարձման Սրբավայրին վրայ կատարուեցաւ ժամերգութիւն եւ նախատօնակ:

Կիր. 30 Մարտ.- Քառասնորդաց: Տնոսիւն: Առաւօտուն, Տ. Սեւան Եպս. Դարիպեանի գլխաւորութեամբ Միաբանութիւնը ինքնաշարժերով քարձրացաւ Զիթենեաց լեռ ու «Հրաշափառ»ով մուտք գործեց Համբարձման Սրբատեղին, ուր եպիսկոպոսական խորով պատարագեց եւ ֆարոգեց Տ. Ռազմիկ Վրդ. Պօղոսեան:

Գշ. 1 Ապրիլ.- Երեկոյեան կատարուեցաւ Մեծ Պահոց հսկումը ի Ս. Հրեշտակապետաց:

Հանդիսապետն էր Տ. Կոմիտաս Վրդ. Շերպէրեան, ֆարոգեց Տ. Համբարձում Վրդ. Քէշիշեան:

Եշ. 3 Ապրիլ.- Հսկումին ի Ս. Յակոբ Հանդիսապետեց եւ ֆարոգեց Տ. Սեւան Եպս. Դարիպեան:

Ուր. 4 Ապրիլ.- Կէսօրէ ետք Ս. Հրեշտակապետաց եկեղեցւոյ մէջ կատարուեցաւ «խաղաղական ժամերգութիւն»:

Իրիկեանդէմին, յաջորդ օրուան Քառասուն Մանկունք տօնին առիթով, Ս. Հրեշտակապետաց եկեղեցւոյ մէջ կատարուեցաւ Հսկման մասնաւոր արարողութիւն: Հանդիսապետն էր Տ. Բագրատ Արդ. Պուրնէֆեան որ նաեւ ֆարոգեց:

- Ապա Տ. Բագրատ Արդ. Պուրնէֆեանի գլխաւորութեամբ Սարկաւազները Քառասուն Մանկանց նկարին առջեւ կարգաւորուած սեղանին դիմաց ծունկի գալով երգեցին օրուան տօնին յատուկ շարականը:

Շր. 5 Ապրիլ.- Սրբոց Մանկանցն Քառասնից Որք ի Սեբաստիա կատարեցան: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Համբարձում Վրդ. Քէշիշեան: Վերաբերումը կատարուեցաւ Քառասուն Մանկանց նկարին առջեւ շտկուած սեղանին վրայէն, որուն դիմացը կաթսայի մէջ կը պլպլային ֆառասուն գոյնզգոյն կանթեղներ, աւանդական սառցապատ լինը խորհրդանշող:

- Կէսօրէ ետք, Տ. Դաւիթ Արք. Սահակեանի գլխաւորութեամբ Միաբանութիւնը «Հրաշափառ»ով մուտք գործեց Ս. Յարութեան Տաճար, ուր Ս. Գերեզմանին եւ Գիւտ Խաչի այրին ուխտերէն ետք, վերջնոյս կից՝ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ պաշտուեցան ժամերգութիւն եւ նախատօնակ:

Ապա կատարուեցաւ Տնօրինական Սրբատեղեաց այցելութեան հանդիսաւոր թափօր Տաճարէն ներս: Թափօրապետն էր Տ. Կոմիտաս Վրդ. Շերպէրեան:

Կիր. 6 Ապրիլ.- Քառասնորդաց: Դատաւորին: Գիշերային եւ առաւօտեան ժամերգութիւնները պաշտուեցան ի Ս. Գրիգոր Լուսաւորիչ: Հանդիսապետն էր Տ. Դաւիթ Արք. Սահակեան, որ մատուց օրուան Ս. Պատարագը Քրիստոսի Ս. Գերեզմանին վրայ եւ «Հայր Մեր»էն առաջ ֆարոգեց:

Պատարագիչ Սրբազան նախագահեց Ս. Գերեզմանին շուրջ կատարուած եռադարձ թափօրին, որ աւարտեցաւ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ:

Գշ. 8 Ապրիլ.- Իրիկուան հսկումին ի Ս. Հրեշտակապետաց ֆարոգեց Տ. Ընծանուէր Արդ. Բարախանեան:

Եշ. 10 Ապրիլ.- Իրիկուան հսկումին ի Ս. Յակոբ հանդիսապետեց եւ ֆարոգեց Տ. Անուշաւան Ծ. Վրդ. Զոջանեան:

Ուր. 11 Ապրիլ.- Նախատօնակին ի Ս. Յակոբ հանդիսապետն էր Տ. Դաւիթ Արք. Սահակեան:

Շր. 12 Ապրիլ.- Ս. Գրիգոր Լուսաւորիչն Մուտն ի Վերապէս: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի աւանդատան Ս. Լուսաւորիչ սեղանին վրայ: Ժամարարն էր Տ. Դանիէլ Քեհն. Գարանեան:

Կիր. 13 Ապրիլ.- Քառասնորդաց: Գայտեան:

Ս. Պատարագը մատուցուեցաւ Երուսաղէմի Հրեական քաժնին մէջ գտնուող Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ: Հանդիսապետն էր Աւստրալիոյ եւ Նիւ Զիլանտայի Առաջնորդ, Հեռաւոր Արեւելի Հայրապետական Պատուիրակ Տ. Աղան Արք. Պալիօզեան: Ժամարար եւ քարոզիչն էր Տ. Վանիկ Վրդ. Մանկասարեան:

Գշ. 15 Ապրիլ.- Իրիկուան հսկումին ի Ս. Հրեշտակապետաց հանդիսապետեց Տ. Աղան Արք. Պալիօզեան: Քարոզիչն էր Տ. Զաքարիա Քինյ. Սարիբեկեան:

Եշ. 17 Ապրիլ.- Աւետման նախատօնակին ի Ս. Յակոբ հանդիսապետն էր Սեւան Եպս. Ղարիպեան: Երեկոյեան կատարուեցաւ Մեծ Պահոց վերջին հսկումը. հանդիսապետեց եւ քարոզեց Տ. Դաւիթ Արք. Սահակեան:

Ուր. 18 Ապրիլ.- Աւետումն Ս. Աստուածածնի: Առաւօտուն Տ. Սեւան Եպս. Ղարիպեանի գլխաւորութեամբ, Միաբան Հայրեր ինքնաշարժերով իջան Գեքսեմանիի ձորը ու «Հրաշափառ»ով մուտք գործեցին Ս. Աստուածածնայ Տաճար, ուր Տիրամօր Ս. Գեքեզմանին վրայ օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը մատուցեց հանդիսապետ Սրբազանը:

Շր. 19 Ապրիլ.- Յիշատակ Յարութեան Ղազարու: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Համբարձում Վրդ. Քէշիշեան:

- Կէսօրէ ետք, Պատրիարք Սրբազան Հօր գլխաւորութեամբ, Միաբանութիւնը «Հրաշափառ»ով մուտք գործեց Ս. Յարութեան Տաճար, ուր պաշտուեցան ժամերգութիւնն ու նախատօնակը մեր վերնամատրան մէջ: Ապա կատարուեցաւ Տնօրինական Սրբատեղեաց այսեւութեան հանդիսաւոր քափօր տաճարէն ներս: Թափօրապետն էր Տ. Վանիկ Վրդ. Մանկասարեան:

Կիր. 20 Ապրիլ.- Ծաղկազարդ: Գիշերային եւ Առաւօտեան ժամերգութիւնները պաշտուեցան Ս. Յարութեան մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Դաւիթ Արք. Սահակեան: Ժամարարն էր Տ. Բագրատ Արք. Պուրնէքեան: Ապա կատարուեցաւ եռադարձ մեծահանդէս քափօր Քրիստոսի Ս. Գեքեզմանին եւ Պատանատեղւոյն շուրջ, Պատրիարք Սրբազան Հօր գլխաւորութեամբ: Թափօրականք ի ձեռին ունէին ձիթեղեղեղ եւ արմաւինեաց ոստեր, իսկ մեր քափօրին կը հետեւէին Ղպտոց եւ Ասորոց քափօրները: Կատարուեցաւ «Անդաստան»: Վանք վերադարձին հայոց քաղի ոստիկանատան մուտքէն, Միաբանութիւնը եւ դպիրները «Որ գլխորհուրդ» շարականը երգելով յառաջացան դէպի

Պատրիարքարան եւ «Պահպանիչ»ով վերջացաւ:

- Կէսօրէ ետք Մայր Տաճարին մէջ կատարուած «Անդաստան»ին հանդիսապետն էր Տ. Մեսրոպ Արք. Մուրաֆեան:

Տ. Աւետիս Արք. Իփրանեան կարդաց վարագոյրներու քացման մասնակցողներուն անունները: Կատարուեցաւ հանգանակութիւն Ազունիէի Ազգային բուժարանին ի նպաստ:

- «Դոնրացէք»ի արարողութեան նախագահեց Պատրիարք Սրբազան Հայրը, աղոթքի ռեճնալով Տ. Դուսան Վրդ. Ալեանեան եւ Տ. Բագրատ Արք. Պուրնէքեան:

Մայր Տաճարի Աւագ խորանին, փակեալ վարագոյրին ետեւը կը գտնուէր Տ. Դաւիթ Արք. Սահակեան:

Գշ. 22 Ապրիլ.- Աւագ Երեմիայի: Ըստ սովորութեան Ս. Պատարագ մատուցուեցաւ Ս. Յարութեան Տաճարի գաւթի Ս. Յովհաննէս Աւետարանչի մատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Անուշաւան Մ. Վրդ. Զղաճեան: Ժամարարն էր Տ. Սահակ Արք. Մաշալեան:

Սրբոց Թարգմանչաց Երկրորդական վարժարանի աշակերտութիւնը ընդունեց Սուրբ Հաղորդութիւն:

Համդիսապետ Հայր Սուրբը գլխաւորեց Տաճարէն ներս կատարուած «Ուխտաւորաց Թափօր»ը եւ տուաւ քացատրութիւններ:

Գշ. 24 Ապրիլ.- Աւագ Հինգշաբթի (Յիշատակ Ընթրեաց): Առաւօտուն, Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ «Կարգ Ապաշխարութեան» հանդիսապետն էր Տ. Դաւիթ Արք. Սահակեան, որ օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը մատուցեց Մայր Տաճարի Աւագ խորանին վրայ:

Ուխտաւորներ եւ ժողովուրդաց սաներ ընդունեցին Ս. Հաղորդութիւն:

- Նոյն առաւօտ, Ապրիլ 24ի Եղեռնին նուիրուած Միաբանական քափօրը, առաջնորդութեամբ Հ.Ե.Մ.Ի. Հ.Մ.Ը.Մ.Ի եւ Ե.Հ.Բ.Մ.Ի սկաւառներու կազմերուն, նախագահութեամբ Պատրիարք Սրբազան Հօր, աղոթքերակից ունենալով, Հայաստանի Պատույ Հիւպատոս՝ Մեծարգոյ Տիար Յոյակ Մոմենեան եւ հայ կաթողիկէ համայնքին հոգեւոր պետ Տ. Անդրէաս Եպս. Պետրոսեան, ուղղուեցաւ դէպի Ս. Փրկիչ Ազգային Գեքեզմանատունը Արարայի Յուշարձանին առջեւ կատարելու մեր քիւրաւոր նահատակներուն համար հոգեհանգստեան պաշտօն: Ծաղկեպսակներ դրուեցան: Օրուան Աւետարանը կարդաց Տ. Բագրատ Արք. Պուրնէքեան: Իսկ յիշատակի ուղիւնը կատարեց Հ.Մ.Ը.Մ.Ի Ատենապետ Տիար Յակոբ Տէմիրեան:

Այս թափօրը նախագահութեամբ Պատրիարք Սրբազան Հօր, վերադարձաւ վանք: Բազմութիւն մը պարիսպէն դուրս քաղաքի փողոցներէն քաղեց եղեռնը յուշող պատկերներով: Նոյն կերպով ժամը 2ին, երիտասարդներ լուռ նստակեաց ցոյց կատարեցին Վանքի մուտքին դիմաց մայրիկն վրայ, իսկ ժամը 4ին բազմութիւն մը քաղաքացիներու հրապարակին վրայ:

- Կէսօրէ ետք, Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ «Ռոնդուայ»ի սրտագրաւ կարգը նախագահութեամբ Պատրիարք Սրբազան Հօր:

- Ժամ մը ետք, ուխտաւորներու թափօր մը, գլխաւորութեամբ Տ. Անուշաւան Ծ. Վրդ. Զոհանեանի, այցելեց Քրիստոսի գոյգ բանտերը, Ս. Հրեշտակապետաց վանքին գաւիթը, Զիքենիի ծառին մօտ, նաեւ Ս. Փրկչի կիսաւեր մատուռին, ուր կատարուեցաւ Հոգեհանգստեան կարգ:

Տ. Սահակ Արդ. Մաշալեան տուաւ քաջատրութիւններ:

- Գիշերուան ժամը 7-11.30 Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ «խաւարման կարգ»: «Փառք ի բարձունք»էն ետք Տաճարին խորհրդաւոր մթնոթան մէջ քարոզեց Տ. Գրիգոր Վրդ. Անանեան: Ժամերգութեան աւարտին Պատրիարք Սրբազան Հայրը կատարեց «Խաչի Բո Քրիստոս»ի խնկարկութիւնը:

Ուր. 25 Ապրիլ.- Աւագ Ուրբաթ (Յիշատակ խաչելութեան): Կէսօրը քիչ անց, Ս. Յարութեան Տաճարի մեր վերնամասերէն մէջ կատարուեցաւ «կարգ խաչելութեան»: Հանդիսապետն էր Տ. Կիրիլ Եպս. Գաբրիէլեան:

- Կէսօրէ ետք, Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ երեկոյեան ժամերգութիւն եւ «քաղման կարգ», նախագահութեամբ Պատրիարք Սրբազան Հօր:

Շր. 26 Ապրիլ.- Աւագ Շաբաթ (Չրագալոյց Ս. Զատիկի): Առաւօտուն ժամը 9ին Ս. Յարութեան Տաճարին դուռը քացուեցաւ մեր կողմէն. քանային առնուելով Տ. Ռազմիկ Վրդ. Պօղոսեանի ձեռքէն:

- Ժամը 11ին Միաբանութիւնը՝ Պատրիարք Սրբազան Հօր գլխաւորութեամբ մեկնեցաւ Ս. Յարութեան Տաճար: Մէկ անգամ Ս. Գերեզմանին շուրջ դառնալով մտան Տեսարան: Ս. Գերեզմանի դրան կնքուեցին եւ Յունաց թափօրէն ետք, մեր լուսահանը՝ Տ. Ռազմիկ Վրդ. Պօղոսեան Յունաց Տ. Տիմոթէոս Պատրիարքին հետ մտաւ Ս. Գերեզման: Լուցուած միակ կանթեղէն իրենց ձեռքի մոմերու խորձը վառելով, լուսամուտէն դուրս տուին նուիրական լոյսը: Ակնբարքի մը մէջ լուսակիրներու կողմէ փոխանցուելով մեր վերնամասերէն պատշգամբին մէջ իր տեղը գրաւող Պատրիարք

Սրբազան Հօր ձեռքը կը հասնի, որ պատշգամբէն կ'օրհնէ խոնկեցած բազմութիւնը:

Տեղի ունեցաւ եռադարձ թափօր: Թափօրականք երգեցին «Քրիստոս Յարեաւ» շարականը: Լուսահան Հայր Սուրբը եպիսկոպոսական խոյրով գլխաւորեց թափօրը:

Մեր թափօրին կը հետեւէին Ղպտոց եւ Ասորոց թափօրները: Վանք դարձին, ճամբու կէսին, կազմուեցաւ թափօր: Պատրիարք Սրբազան Հայրը շուրջառով եւ խաչ ու գաւազան ի ձեռքին իսկ լուսահան Հայր Սուրբը, շուրջառով եւ լուցուած մոմը ապակիէ պահպանակի մէջ կրելով, շարականի երգեցողութեամբ եւ զանգահարութեամբ մտան Մայր Տաճար: Պատրիարք Սրբազան Հայրը Մայր Տաճարի դասին մէջ կարդաց Ս. Զատկուան Աւետարանը եւ Պահպանիչով արձակեց ժողովուրդը, աւետելով «Քրիստոս յարեաւ ի մեռելոց»:

- Ժամը մը ետք ճրագալոյցի արարողութիւն կատարուեցաւ Մայր Տաճարին մէջ: Ժամարարն էր Տ. Արամ Վրդ. Արեշեան: Պատարագի վերջաւորութեան կատարուեցաւ նախատօնակ, գլխաւորութեամբ Պատրիարք Սրբազան Հօր:

Այս բոլորը գացին սեղանատուն ժամարար Հայր Սուրբը կարդաց Ս. Զատկուան Աւետարանը եւ բոլորը ընթերցեցին:

Կիր. 27 Ապրիլ.- Զատիկ Յարութեան Տեառն: Կէս գիշերէն երկու ժամ ետք, Միաբանութիւնը Տ. Սեւան Եպս. Ղարապետի գլխաւորութեամբ մեկնեցաւ Ս. Յարութեան Տաճար: Ս. Գողգոթայի ուխտէն ետք մեր վերնամասերէն մէջ պաշտուեցաւ ժամերգութեան մէկ մասը, մինչեւ «Հարց»: Այս իջնելով Ս. Գերեզմանին շրջափակը, մնացեալը շարունակուեցաւ, թափօրական զննցով: Մեր թափօրին կը հետեւէին Ասորոց եւ Ղպտոց թափօրները:

Կատարուեցաւ «Անդաստան»: Իսկ Պատանաւորները վրայ կարդացուած Աւետարանէն ետք տեղի ունեցաւ «Խաչի Բո Քրիստոս»:

- Մէկ ժամ ետք Պատրիարք Սրբազան Հայրը միաբանութեան հետ մուտք գործեց Ս. Յարութեան Տաճար: Տ. Մեսրոպ Արք. Մուրաֆեան օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը մատոյց եւ քարոզեց Քրիստոսի Ս. Գերեզմանին վրայ:

- Վանք դարձին Միաբանութիւնը, դպիրներ եւ ուխտաւորներ Հայոց թաղի մուտքէն «Այսօր յարեաւ» շարականի երգեցողութեամբ քարձարացան Պատրիարքարան:

- Կէսօրէ ետք, Պատրիարք Սրբազան Հայրը նախագահեց Մայրավանքի մեծ բակին մէջ կատարուած Զատկական մեծ «Անդաստան»ին:

Բշ. 28 Ապրիլ.- Յիշատակ Մեռելոց Բ. օր

Ս. Զատիկի: Պատրիարք Սրբազան Հայրը, օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը մատոյց եւ քարոզեց Մայր Տաճարի Աւագ խորանին վրայ: Սպասարկողներն էին Ս. Կոմիտաս եւ Ս. Համբարձում վարդապետները: Բուրվառակիրներն էին Ս. Էմմանուէլ եւ Ս. Թեոդորոս Աքեղաները: Ապա Պատրիարք Սրբազան Հայրը ամպիտովանիին ներքեւ Ս. Խաչափայտի մասունքն է ձեռնի, իսկ Միաբան հայրեր մասունքներով, դարձան եռադարձ թափօր, որմէ ետք Միաբանութիւնը եւ ժողովուրդը «Այսօր յարեալ» շարականի երգեցողութեամբ բարձրացան Պատրիարքարան, ուր Պատրիարք Սրբազան Հայրը բոլորին նշխար բաժնեց:

Գշ. 29 Ապրիլ.- Գ. օր Ս. Զատիկի: Մայր Տաճարի Ս. Գլխադրի մատուռին մէջ պատարագեց Ս. Էմմանուէլ Արք. Աթաշանեան:

Շր. 3 Մայիս.- Յիշատակ Գլխատման Սրբոյն Յովհաննու Կարապետին: Մայր Տաճարի ձախակողմեան դասին մէջ գտնուող Ս. Յովհաննու Կարապետին նուիրուած խորանին վրայ պատարագեց Ս. Զաքարիա Քենյ. Սարիքեկեան:

Կիր. 4 Մայիս.- Նոր Կիրակէ (Կրկնագատիկ): Ըստ սովորութեան, Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ պատարագեց լուսահան Ս. Ռազմիկ Վրդ. Պողոսեան:

Կէսօրէ ետք տեղի ունեցաւ «Անդաստան» հանդիսապետն էր Ս. Սեւան Եպս. Դարիպեան:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ

Բշ. 24 Մարտ.- Յունաստանի Անկախութեան (1821) տարեդարձին առիթով, Նաշընըլ Հօթէլին մէջ տրուած իւրասիրութեան ներկայ գտնուեցան Պատրիարք Սրբազան, Դաւիթ Արք. Սահակեան եւ Սեւան Եպս. Դարիպեան:

Բշ. 31 Մարտ.- Առաւօտուն Ս. Դաւիթ Արք. Սահակեան եւ Ս. Սեւան Եպս. Դարիպեան գացին Պապական նուիրակին, շնորհաւորելու համար անոնց Ս. Զատիկը:

- Նոյն առաւօտուն Պատրիարք Սրբազան Հայրը նամբողոց դէպի Յորդանան, ապա անցնելու համար Սուրիա, Դամասկոսի մէջ զբաղելու համար վանքապատկան կալուածներու կարեւոր հարցերով:

Գշ. 1 Ապրիլ.- Առաւօտուն Միաբանութիւնը Ս. Դաւիթ Արք. Սահակեանի գլխաւորութեամբ գնաց ֆրանչիսկեաններուն (Քուսքոսիին) եւ լատինաց Պատրիարքարան շնորհաւորելու համար անոնց Ս. Զատիկը:

- Ապա Ս. Դաւիթ Արք. Սահակեան եւ Ս. Ռազմիկ Վրդ. Պողոսեան շնորհաւորութեան գացին Անկլիկան եկեղեցւոյ Գեր. Եպիսկոպոսին:

- Նոյն օրը Ս. Սեւան Եպս. Դարիպեանի գլխաւորութեամբ մի քանի Միաբան Հայրերու գացին Յոյն կաթողիկոսներուն եւ լուսեբաղաններուն շնորհաւորելու համար անոնց Ս. Զատիկը:

Գշ. 23 Ապրիլ.- Երեկոյին, Ապրիլեան եղեռնի Յուշատօնի 82րդ տարեդարձի առիթով, Միացեալ Յանձնախումբի ջանքերով, ժողովրդային հաւաքոյթ մը տեղի ունեցաւ Ժառանգաւորաց Վարժարանի սրահին մէջ, նախագահութեամբ Պատրիարք Սրբազան Հօր հանդիսավար Ս. Բագրատ Արք. Պուրնէֆեանի բացման խօսքով, յայտագրին մէջ բաժին առին ժառանգաւոր սաներ խմբերգներով եւ արտասանութեամբ, իսկ ուղերձներով արտայայտուեցան Սարո Նազգաշեան Հ.Ե.Միութեան, Օհան Կիրեղեան Հ.Մ.Ը.Միութեան, եւ Արամ Խաչատուրեան Ե.Հ.Բ.Միութեան անունով:

Գշ. 29 Ապրիլ.- Առաւօտուն, ֆրանչիսկեան Միաբանութիւնը, Իսրայէլի Պետական կազմը, Պապական նուիրակը, Պաղեստինեան Աֆգաֆի կազմը, Լատինաց Ամեն. Պատրիարքը, Մարօնիթներու Եպս.ը, Յոյն կաթողիկ Եպս.ը, Լուսեբաղանները, Հապէշաց Եպս.ը իրենց Միաբանութիւնով եկան շնորհաւորելու համար Հայոց Ս. Զատիկը:

- Նոյն օրը Պատրիարք Սրբազան Հօր գլխաւորութեամբ Միաբանութիւնը գնաց Յունաց Ամեն. Պատրիարքին, շնորհաւորելու համար անոնց Ս. Զատիկը:

- Կէսօրէ ետք, ժամը 5ին Դպտոց Արքեպիսկոպոսը եւ Ասորոց Եպիսկոպոսը իրենց Միաբանութիւններով եկան շնորհաւորելու համար հայոց Ս. Զատիկը:

Գշ. 30 Ապրիլ.- Առաւօտուն Ս. Սեւան Եպս. Դարիպեանի գլխաւորութեամբ, մի քանի միաբան հայրեր գացին, Դպտիներուն, Հապէշներուն եւ Ասորիներուն շնորհաւորելու համար անոնց Ս. Զատիկը:

- Նոյն օրը առաւօտուն Յունաց միաբանութիւնը եկաւ շնորհաւորելու համար Հայոց Զատիկը:

Բշ. 12 Մայիս.- Երուսաղէմի քաղաքապետ Եհուտ Օլմէրքի հրաւերով, Դաւիթի Բերդին «Երուսաղէմի պատմութեան քանգարանին» մէջ, Իսրայէլի Տօնին առթիւ, ներկայ գտնուեցան Ս. Անուշաւան Մ. Վրդ. Զոհանեան, Ս. Գուսան Վրդ. Ալեանեան եւ Ս. Ռազմիկ Վրդ. Պողոսեան:

Գշ. 13 Մայիս.- Վերափոխման «կրօնաւոր» ներ եւ կրօնաւորութիւններ» ընկերութեան կողմէ կազմակերպուած պատարագին, նախագահութեամբ Ս. Միշէլ Սապպահ Լատինաց Պատրիարքին, հաւաքօսի Ս. Պետրոս վերանորոգուած եկեղեցւոյ նաւակատիֆին առթիւ, ներկայ գտնուեցան Ս. Դաւիթ Արք. Սահակեան եւ Ս. Թեոդորոս Արք. Զաքարեան: